



ՊՈՒՏՏԸ

Պատասխանի վրայ պատմութեանս մէջ ուրիշ բան
 մըն ալ կայ. որ ինքնին մարդկային խելքին հաս-
 ղութեանը եւ շրջակայ ազգերուն հետեւելուն նայե-
 լով բան մը ըսել չէ. բայց նշանակելու արժանի բան
 մըն ալ ունի. ըսինք որ պրահմանները հնդկաց ազ-
 գը չորս ցեղ բաժնեցին. եւ այս ցեղերը իրարու
 անհաղորդելի ըրին. անանկ որ ամէն մէկ ցեղի մարդ-
 իր ցեղին ընկերական վիճակէն զոհ ըլլալու ստիպ-
 ուած էր. չէ թէ միայն իրմէ վեր՝ այլ եւ իրմէ վար
 ցեղի հետ ալ չէր կրնար խառնուիլ. Պատաս Գը-
 րահմանի օրէնքներուն նորոգիչը պիտի ըլլամ ըսելէն
 ետքը կը պատմուի թէ ամէն մարդոց իրարու հաւա-
 օար ըլլալը քարոզելով այս ցեղերու զանազանութիւնը
 վերցուց. ամէն մարդ միասէս Մտուծոյ արարած է
 եւ Մտուած ամենուն հայրն է. կրտէր, Քրիստոս
 տէրն մեր որ Մովսէսի օրէնքը չէ թէ խախտելու

այլ կատարելագործելու եկայ կըսէր, հրէից մի միայն
ընտրեալ ազգ ըլլալն ուն վերջ տուաւ. իրմով նոր իւ-
րայեւ ազգի մը հիմն եղաւ, ո՛չ յոյն եւ ոչ սկիւ-
թացի. պատուոյ կողմանէ ազգերուն իրարմէ տար-
բերութիւնը վերցընելով ամէնը մէկ կընէ 'ի Յիսուս
Քրիստոս եւ ազգայնութեան որոշումը բրիտանէու-
թենէ դուրս ընկ քաղաքական բան մը կը մնայ: Այլ
պատմութիւթ Արևմտա մարդոց հաւատարմութիւն քա-
րողելուն համար պրահմաններուն ատենի եղաւ եւ
անոնցմէ շատ նեղութիւն կրեց: Եւ սուրբ աւետա-
րանին պատմութեանէն գիտեմք որ տէրն մեր անգամ
մը փարիսեցիներուն առաջը երբ որ ըսաւ, Եղբսէի
ատենը հրեաները շատ լսորդոտ ունէին, եւ միայն 'է
էման ասորին սրբեցաւ. եւ Եղիայի ատենը շատ այրի
կին կար հրէից մէջ. բայց մարգարէն Աստուծոյ հը-
րամանովը փնտրեցիներուն Աստիւթիւ քաղաքը այրի
կնոջ մը տուն գնաց, որ հեթանոս էր, իմացան
փարիսեցիները որ այս խօսքերը իրենց աղչին գե-
րադուներութեանը կը դպչին, եւ բարկանալով լեռնէն
վար նետել ուղեցին (Պ. ուկ. Դ): Այս համեմատու-
թեան կէտերը մեզի խորհիլ կոտան որ կամ ցեղե-
րուն տարբերութիւնը վերցընելու վրայօք: Արևմտա-
յին համար պատմութեան ճշմարիտ չէ. կամ Արև-
տան մէկ հատիկ մը չէ. ուրիշ պատմականք ալ պի-
տի ըլլան:

Արևմտա մէկ հատիկ մը չէ ըսինք. եւ ասորա-
պացոյցներ կան: Արահմանները հոս պատմութեան
Արևմտայէն առաջ ուրիշ Արևմտա ալ կը ճանչնան,
որ յոյն պատմիչներուն ալ անծանօթ չէր. եւ անանկ

բուներ կը պատմուի որ մէկ Պուտտայի մը վրայ չեն
կըրնար պատշաճիլ : Պրահմանները իրենց կրօնքին
քառասուն եւ վեց օրէնադիրներուն մէկին անունը
Պուտտա կրսեն . որ հոս պատմուածը չէ . վասն զի
ասիկայ իրենց հաստատեալ օրէնքին դպչելուն համար
չէր կըրնար անոնց ընդունելի ըլլալ իբրեւ օրէնքս-
դիր : Էրոգոտոս յոյն պատմիչը իր պատմութեան
առաջին գրքին մէջ կըսէ թէ մարաց Վէսովկէս թա-
գաւորին ատենը մոգերուն հետը Վասիլ աղօն ալ
կը բնակէր . եւ ասոնց ամէնն ալ բնիկ մարաց աղ-
օնէն էին : Ուրեմն այս Վասիլ ցեղին ալ նախա-
հայրը Վասիլն որ է Պուտտա , ուրիշ մը պիտի ըլ-
լայ : Թէ Եսիա եւ Թէ Լւերուպա շատ քաղաքներ
կան , որոց հիմնադիրը Պուտտա մըն է կըսուի , եւ
անունին հիմնադրին անունէն առնուած է : Թնտա-
զիա դաւառը Ողիմպոս լեռանը վրայ պատգամատե-
ղի մը կար կուտաւաշտութեան ատենը , որ Վաստեան
կըսուէր , եւ Ստեփաննոս բիւզանդացի աշխարհա-
գիրը կըսէ . " Վաստեան Ղիոսը Վաստեան ալ անուա-
նեցին " : Ես անունս ալ Պուտտայի մը անունէն է :
Պուտեա անունով քաղաք մը կար Փոխղիա . մէկ
մըն ալ Թեսաղիա : Պուտեա անուն աստղածուհի
մը կար , որուն Լթիա αἰθια մականուն կուտային , որ
յունաց հին լեզուովը նաւ ըսել է . եւ կըսէին որա-
ռաջին նաւ շինողը եւ նաւով ճամբայ ընել սովորե-
ցընողը ասիկայ եղաւ : Երկրագործութեան գիւտն
ալ ասոր կուտային : Ես Պուտեա կամ Պուտտա ալ
" Եւ նահապեալ կընմանի , եւ առտուածուհի ըսել-
նին ալ երբ հեթանոսներուն բերնէն կը ըսեմք զար-

մանք և է երբ գիտեմք որ Սովսէս մարդարէն ալ
կին կարծող կայ անոնց մէջ : Եւս տարբեր պու-
տաներէն զատ ուրիշ պուտտաներ ալ ըլլալը հաւա-
նական է : Բայց Պուտտայի հետեւողներուն եւ քրիս-
տոնեաներուն կրօնական մէկ քանի սովորութեանց եւ
արարողութեանց մէջ երեւցած նմանութիւնը ասոնց-
մով չկրնար մեկնուիլ : ասոնք ինչէն ըլլալը համառօտ
ե՛ր ըսենք :

Պուտտայի աղանդը ատեն ատեն փոփոխութիւն-
ներ ընդունելով նոյն աղանդոյն գլխաւորները ժո-
ղովքներ կընէին . ժամանակին եւ պարագաներուն
համեմատ ասոնց մէջէն բան կար որ կընդունէին բան
կար որ կը մերժէին : Եւս ժողովքներուն վերջէնէն
նորը որ էր չորրորդը Քիչմիրու Գանիկեա թա-
գաւորը որ բոլոր արեւելեան Հնդկաստանի տիրեց
մինչև Գանգէս գետը : Պուտտայի վարդապետու-
թիւնը եւ աղանդը շատ ծաղկեցաւ : Եւս թագա-
ւորս ալ նոյն աղանդոյն կը հետեւէր . եւ Քրիստո-
սի Կէ թուին մեռաւ : Եսոր օրովը սկսաւ սուրբ ա-
ւետարանի քարոզութիւնն ալ այն երկիրները տարա-
ծիլ Բարդուղիմէոս եւ Փիլիպպոս առաքեալներուն
քարոզութեամբը : Ետները մանաւանդ արեւմտեան
մատենագիրները կըսեն որ սուրբ Թովմէս, առաք-
եալն ալ հոն քարոզած եւ մինչեւ Հինաց երկիրը
դալցած ըլլայ : բայց ասիկայ հաստատուն չընենելու
պատճառներ ալ կան : Ինչ որ է նէ քրիստոնէու-
թեան թշնամի ելան այն ատենը պրահմանները . եւ
ասոնց թշնամութիւնը կըրցաւ պատճառ ըլլալ որ
Պուտտայի հետեւողները ասոնց աղէկ աչ բով նա-

յին . եւ քարոզութիւննին սիրով մտիկ ընեն ուրիշ
 բանի համար չէ ալ նէ պրահմաններուն դէմ ըրած
 ըլլալու համար : Թապաւորն ալ Վանիկքային յաջոր-
 դը , ասոնց կողմը ըլլալով քրիստոնէութիւնը քիչ
 ժամանակի մէջ ծաղկեցաւ եւ զօրացաւ . եւ սուրբն
 Պանթկենոս աղէքսանդրացի որ Ֆրիջիոն Թուականու-
 թեան երկրորդ դարուն սկիզբներն էր եւ առաքե-
 լոց աշակերտներէն կը սեպուէր Հնդկաստան քարո-
 ղութեան գնաց . եւ հաւատացելոց բազմութիւնը
 դատա հոն որոց ձեռքն էր Սատթէոսի աւետարանը
 եւ կըսէին որ սուրբ Տարգուղիսէոս առաքեալը ա-
 նիկայ հոն ձգած էր : Եւ այն տեղաց մօտաւոր
 Խիսրքիստանու դաւառն ալ քրիստոնէութիւնը մտած
 էր . եւ հաւատացեալները բազմացած էին :

Պուտոյի հետեւողները քրիստոնէից նպատա-
 ւոր եղան ալ նէ կատարեալ քրիստոնեայ եղող քիչ
 գտնուեցաւ մէջէրնին բայց շատը հաւատոյ եւ բարո-
 յականի սկզբունքները անոնցմէ սովորելով իրենց ա-
 ղանդոյն հետը խառնեցին : Եւ այսպէս թէ կրօնա-
 կան վարդապետութիւններնուն եւ թէ արարողու-
 թիւններնուն մէջ տեսնուած քրիստոնէութեան նման
 բաները . զորօրինակ վանքեր եւ կրօնաւորներ ունե-
 նալին . քօւրմէրնուն իրենց կրօնական պաշտաման
 ատենուանը դործածելիք զատ զգեստ ունենալնին եւ
 այն ալ քրիստոնէից քահանաներուն պատարագի զոհու-
 տի նման ըլլալը որ մովսիսական օրինաց մէջ ալ կ'որ
 քրիստոնէութեան ատենէն եւ առաքելական քարո-
 ղիւններուն հաւատացելոց եկեղեցւոյ մէջ մըտցոցած-
 ներէն առնուած կ'ըլլայ : Սանաւանդ որ իրենց վար-

դապետութեան մէջ կար որ շատ պուտտաներ եկած
են . եւ շատ պուտտաներ ալ պիտի դան . եւ որով-
հետեւ այս պուտտաները կրօնից նորոգիչ պիտի ըլ-
լային , երբ կրօնական իւր մը քարոզող իմաստուն
մարդ մը տեսնէին , մանաւանդ թէ որ հրաշագործ
զօրութիւն մըն ալ այն քարոզիչը Մատուճմէ առած
ըլլար նէ անոր ալ պուտտաներէն մէկը ըլլալուն չէին
տարակուսեր այն աղանդոյն հետեւողները անոնց քա-
րոզածը չընդունէին ալ նէ ըրածներուն նիւթական
հետեւողութիւն մը կունենային : Եւ այսպէս քրիս-
տոնէական արարողութեանց եւ սովորութեանց մօտ
բաները չէ թէ քրիստոնեաներն ասոնցմէ , այլ ասոնց
քրիստոնեաներէն առած են :

[Ա. Ե. Բ. Գ.]

ԱՅԳԱՅԻՆ

Արարչի Լոյս-ընդհանրական Ունեցի :

Այլը ըսինք թէ հոգեւունը շինուեցաւ : Եւ
թըն ամիս հոն կեցայ միաբաններովքս : Լոյն միջո-
ցին հոռոմէ տուն մը ծախու հանուեցաւ , հոգեւուն-
նին արեւելեան կողմէն պատկից : Եւ որովհետեւ լը-
տեցինք որ այն տունը հոռոմները պիտի առնէն ու

իրենց հիւանդանոց շինին, հոգեւորներն խնայեցինք չըլլայ որ հիւանդանոցի կից ըլլալով հոն բնակիլ պատահող կարգաւորներուն կասկածելի ըլլայ. ուստի հարկ եղաւ ինծի որ տանը գինը տամ մէկ ու կէս քէսէ, առի եւ հոգեւորներն խառնեցի. որ այն ալ Աստուծով պիտի նորոգուի. ինչպէս որ պատրիարք անդրանիկ որդիս խոստացաւ, երկու սուրբ աթոռներուն կոստանդնուպօլիս պատահող միաբաններուն բնակութիւն ըլլալու համար: Այլապէս նպտելու յարմար վայելուչ տեղ. Իւսքիւտարու ամէն շէնքերէն բարձր. որկէց կոստանդնուպօլիս եւ Վալաթիա եւ շատ տեղեր կը տեսնուի. երկու ծովերն ու անցողաբաժ ընող նաւերը զբօսանք մըն են. օդը բարեւ խառն եւ հովերը առողջարար: Հոն ժամանակի անցընելու տեղւոյն դովելի ըլլալուն համար չէր այնքան, որքան մեր ազգէն գերի ինկածներուն աղատութեանը համար: Հոն եկողներուն ձրիապէս ժողովարարութեան կոնգակ կը շնորհէի մեր բարեպաշտ եւ ողորմած ազգը յորդորելու համար. մանաւանդ կոստանդնուպօլսեցիները. որոց ողորմութիւնը գերի վերոյ եւ զարմանալի է. Աստուած անոնց վաստակներուն առատ օրհնութիւն եւ շնորհք պարգեւէ:

Յունվար ամսոյն սկիզբը պատուական պատրիարքը եւ իշխանները մեզ Ստամպօլ հրաւիրեցին սուրբ ծընընդեան տօնին համար. գնացինք եւ այն տօնը կատարեցինք սուրբ Վեորդայ գեղեցիկ եկեղեցին. որ սենեակներով ընդարձակ եւ ծովահայեաց է. եւ հոն կատարեցինք չէ թէ միայն սուրբ ծնունդը, այլ եւ սուրբ զատիկն ալ մինչեւ նոր կիրակէն: Աւելեւ

Լաթենեցիները, եւ շատ անգամ Թէրթապոյցիներն ալ մեզ հրաւիրեցին, այլ երթալ չաջողեցաւ։ Միայն պրոսպցիներուն հրաւերին կըրցանք երթալ ապրիլի մէջ. որոյ առաջնորդ ըստամպօլցի Տ. Աերսէս վարդապետը թէպէտ հիւանդատ եւ դողդօջուն՝ բայց շատ շնորհալից ատենաբան էր. որ քահանայներով եւ իշխաններով մեզի անպատմելի սէր եւ ուրախութիւն ցուցուցին եւ ընդունելութիւն ըրին իրենց պարագայներովը. ընծայներով եւ տուրքերով։ Զոն եկաւ նաեւ իմ հօգեւոր որդիս, Իզմիրու առաջնորդ աղեցի Տ. Մինաս վարդապետը, հրաւիրի զիր բերելով Իզմիր երթալու բայց եւ ճանապարհը երկնցընել չուղեցի։ Եւ որովհետեւ զիս զմաւորելու եկած էր Վաղատիայի նոր առաջնորդ Մովսէս վարդապետ որդեակս, իր քահանայներովը եւ իշխաններովը, մեզ հրաւիրելու համար, հաճեցայ, եւ սուրբ Եղիայի կիրակէէն ետքը Պրոսպէն ելայ, եւ յունիսի Մին խաղաղութեամբ հոս մեր վանքը հասայ*։

Ըմենասուրբ աստուածածնի տաճարին երկրպագութիւն մատուցանելէն ետքը միւս օրը զօհացողական փրկարար սուրբ պատարագ մատուցի։ Քաղաքացիները աղէկ ընդունելութիւն ցուցուցին մեզի եւ

* Ըստ 1727 թուին զատիկը սպր. 2 ին ըլլալով սուրբ Եղիայի կիրակին ալ կըլլայ մայ. 28, եւ անոր յաջորդ օրը մայ. 29. Կաթուղեկոսը մայ. 29 ին Պրոսպէն ելած կըլլայ. ուստի ճամբայ ելլելուն տասներորդ օրը յունիսի Մին. Ինկիւրիւ մտած կըլլայ։

առատութեամբ ընծայներ մատուցին : Սուրբ վանքին
ընդոր վիճակներէն ալ քահանայներու եւ իշխաններ ,
եւ զսասապաններէն արեւելցի վաճառականներ մեզի
տեսութեան եւ աջամբուրի եկան , եւ իրենց կար-
եալը համեմատ մեզ սրտուեցին 'ի սէր սուրբ Լուսա-
ւորչին . ամէնէն ալ շնորհակալ եմ . տէր Լուսուած
ամէնն ալ օրհնելով օրհնեսցէ :

Եւն օրերը Լնիկուրիի եկեղեցիներուն առաջե-
րէցները եւ զլիսաւոր իշխանները քովու կանչեցի .
եւ անոնց հետ սուրբ աաճարը երթալով անոնց եւ
սուրբ վանքին միաբաններուն առաջը բացի իմ հո-
գեւոր եղբօրս եւ զեղակիցիս զէյթունցի Յովհաննէս
վարդապետին քարեղէնները եւ բաղմաթիւ գիրքե-
րը : Եւս Յովհաննէս վարդապետը որ իմ օգնականս
եւ սրտակիցս էր , ճգնաղկեաց եւ միշտ առաքինի
մարդ մըն էր , որ ամէն պահոց օրերը ծով կը կե-
նար , եւ սուրբ վանքիս մեծ գործակալն էր , եւ երե-
սուն տարի իմ հետըս հոն կեցաւ : Եւսկայ իմ Լոս-
տանդնուպօլիս զնայած տարիս մարտի 28 ին առ
Լուսուած փոխեցաւ . եւ ասոր մեռելը ինծի մեծ պա-
եւ մորսօք եւ անմխիթար սուգ եղաւ . Քրիստոս
Լուսուած մեր անոր արժանաւոր հոգին սուրբ ճրգ-
նաւորներուն եւ սուրբ վարդապետներուն հետ պը-
սակէ . եւ անոր աղօթքովը մեզի ալ օղորմի : Եսոր
ինչքերը եւ բաղմաթիւ գրքերը եւ ձեռք մի զգետը
որ ընաւ աւրուած չէր , եւ սուրբ տաճարին սպաս-
ները որ իմ ժամանակըս առաջինին երկրին չափ եւ
աւելի շատցած էին արծաթէղէն խաչ , կանթեղ ,
ւկիհ , սաղաւարտ , վարշամակ , դօտի , եւ ուրիշ բա-

ներ, եւ մետաքսէ կամ դիպակէ շինուած դիւաններ
եւ սրբազան զարդեր, եւ եկեղեցիէն դուրս ալ
խուցերուն վերաբերեալ բարեղէններ եւ մեծ ու պղ-
տիկ գորգեր (խալիք եւ խալիչայք), եւ կարպետներ
որոց շատը նոր եւ քիչը հին էին, եւ ինչ որ մառա-
նատունը եւ խոհանոցը պղնձեղէն եւ ուրիշ պատուա-
կան անօթներ կային նոր ու հին, որ քառասուն տար-
ուանս մէջ ժողովեր ու ստացեր էի, անոնք ամէն
ալ նոր առաջնորդ Տ. Մովսէս աստուածաբան վար-
դապետ որդւոյս յանձնեցի: Ըհա շատ բաներ պա-
րունակող հռչակաւոր վանք մը որ Ըստուծոյ օգնու-
թեամբը անարատ եւ ամէն պիտոյքներով լեցուն պա-
հեցի, որ եօթն լուծ քամէլ եւ եղն եւ շատ մը կաթ-
տուող կով եւ ցորենով եւ ամէն բարիքով լեցուն մե-
ծամբ համարանոցներ ունէր, անոր եւ ամէն միա-
բաններուն ժառանգութիւն ձգեցի. եւ այս ամե-
նայն Իսկապետ Ըստուծոյ եւ Իսկայծառ մնալ սուրբ
վանացս եւ ամենասուրբ Ըստուածածնի սուրբ առ-
ձարին:

Հազար դահեկան ալ տուի քաղաքին իշխան մահ-
տէսի Սահարին եւ երեսփոխան մահտէսի Արա-
նուսին, որպէս զի իրենց առուտուրին մէջ բանեցը-
նելով շահեցընեն, եւ ինչ շահ որ իմ ըստակս բերէ
անով միաբաններուն զլիւտհարկ (խարաճը) վճարեն.
եւ աւելցած ուլը միաբաններուն պէտք եղած լւթե-
ղէնները եւ հանգերձները հոգան. եւ ինչ պատճա-
ռաւ որ ըլլայ այն հազար դահեկան մայր զրամը
մարդ չը խախտէ վասն զի հասարակ միաբաններուն
համար է:

Եսոնցմէ զատ նոր ստացած երկու հարիւր ոչխար ունիմ, որ Ատանոյ գիւղը հովուի ձեռք է եւ կը պահէ ծնած գառներուն կէս առ կէս բաժանորդութեան պայմանով. որ ժամանակին անոնց բուրդը կտրեն, ծախեն. եւ անոր գնովը իւղ առնեն սուրբ Եստուածածնի տաճարին կանթիւները վառելու լուսաւորուելու համար. եւ սրտի միամտութիւնով սաղմոսեն եւ աղօթեն ամէն պատճառ եղողներուն եւ տառապելոյս համար:

Եսլ եւ ասկէց երկու տարի առաջ երեք հայազգի արեւելցի գերի գնեցի ալլաղգիներուն ձեռքէն, եւ գին տուի 350 դահեկան: Երբուքը կոյս աղջիկ էին եւ մէկը մատղաշ տղայ: Տղայն հոս առ Եստուած փոխեցաւ. աղջիկներն ալ քաղաքը իշխաններուն տունը պահ տուի, եւ մինչեւ հիմայ հոն են: Սուրբ վանքս ալ երկու եղբայր կան. Յովհաննէս եւ Սարգիս, բնիկ մեծին Ենտիոքայ Սուէյաա ըստած լեռներուն փիւղերէն. եւ մշակ եւ ժիր աշխատաւոր են: Եսոնց հաւնեցայ իրենց արժանաւորութեամբը հաւատարիմ ծառայութիւններնուն եւ պարկեշտութիւններնուն համար. ուստի Եստուծոյ պատշաճ տեսնելովը այն երկու կոյս աղջիկները այս երկու կոյս եղբայրներուն հարսնութեան նշանեցի. եւ քաղաքին մէջ տուն մը որ ունէի անոնց բնակութեան տուի. որպէս զի առաւել եւս հաւատարմութեամբ սուրբ վանքին մշակութիւն ընեն եւ իրենց վարձքովն ապրին իրաւ զըս Եստուծոյ:

Հոս գիտնալով ետ ձգեցի համառօտ յիշատակաբաններով հոս թողած զիրքերը, Երոց հետն է եւ

աստուածաշունչ զիրքերս, սուրբ Աստուածածնի վան-
քին յիշատակ ի / եւ հոգեւոր հօրս Տ. Ստեփաննոս
վարդապետին, եւ մարմնաւոր ծնողացս, հօրս Մար-
տիրոսին, որ մականուամբ դահուկ կըսուէր; եւ մօ-
րըս Մարիամին որ երկուքն ալ 'ի տէր հանգսցեալ
են. ուստի կը խնդրեմ համօրէն վայելողներէդ եւ
կարդացողներէդ, որ այս յիշատակարանս կը կար-
դաք, իմ բաղմամբիս գրքերըս եւ այս սուրբ գրքիս
յիշատակարանըս չզատեն պատուելով կամ արելով
այլ սիրով վայելէք եւ ինձ սուրբ ամուսին Լիմի-
ածնի անարժան լարատետ կաթուղեկոսիս եւ ծնո-
ղացս Մարտիրոսին եւ Մարիամին, եւ եղբայրս Տ.
Յակոբը եւ անոր հինգ զաւերները, եւ ամէն ար-
եանառու մերձաւորներըս յիշէք, որով դուք ալ յիշ-
եալ լինէք 'ի Վրիստոս, եւ անուննիդ կենաց զըպ-
րութեան մէջ գրուին:

Արդ թէ այս գիրքս եւ թէ իմ զրքերէս մէկ
որիշ մը թէ որ մէկը դողնայ կամ շփելով. դուրս
հանէ այս յիշատակարանը գրքիս մէջն կամ սուրբ
վտնքիս յիշատակ գրուած ուրիշ գրքերէն այնպիսին
մեր հոգեւոր իշխանութենէն նշովեալ եւ հոգեով
եւ մարմնով կապեալ ըլլայ երկինքն ու երկիրս. եւ
եղբայրասպան Վայենին եւ դոյ Աբար զարմեանին
եւ Յուդայ խեարիտացիին հետ պատիժ կրէ հոս եւ
հանգերձեալ աշխարհը խի խնամքով պահողները
օրհնեալ են եւ օրհնեալ ըլլան:

Գրեցաւ յիշատակարանն 'ի ԽՆՂ.Ո. (1727)
Թուոյ տուամարի հայոց սեպտ. մէկն. 'ի վանս սուրբ
ձեռամբ անարդին Յարութիւն մարկաւազի:

Ս. Ե. Ր. Պ.

ՏԵՐՕՆՅԻՆԵՐ

ՆԵՄԵԿ Գ

(Երեսնամեկն ։)

Մի՞ծու իշխանին ըրած այս խնդիրները քեզի ոչինչ բաներ կերեւին . բայց թէ անոր եւ թէ Կուէմպոյի իշխանին համար անձնական կարեւորութիւն ունէին : Եւս երկու բարձրաստիճան պաշտօնատէրերը սկիզբէն որոշուած էին մէկը ղեկավարութեամբ Ուաշինգըն երթալու , միւսն ալ Լոնտոն եւ Փարիզ եւ Պետրբուրգ պիտի երթար : Եւս եւս երկրորդը արուեստական եւ բնական բերքերու վրայ տեղեկութիւնները մեծ կարեւորութիւն ունէին . բայց ~~հաստատուած~~ բաներ էին : Վաղղիայի ղեկավարական կարգադրութիւններու եւ պատերազմական տեղերուն քանի հատ եւ ինչպէս բան ըլլալուն վրայօք ըրած հարցմունքներնին : Մէկ քանին մէջ բերեմ . ամէն գաղղիացի ղեկավար իր հրացանն ու ուտելիքը կրող սպասաւոր մը կունենար հետը : Թշնամիի հետ վրացանով պատերազմած ատեննին հրացան գործածողը ստորին ապտիճանի մէկը կըլլայ . իսկ բուն ղեկավարը սո՞ւր գործ կածէ թէ անանկ չէ , եւ պատասխան կըտրուի թէ անանկ չէ . գաղղիացի ղեկավարը ասոնց երկուքն միապէս գործածել գիտէ : ճարտիգի պաշտօնատէրը կըսէ . իրա՞ն կըսէք . անհաւատալի բան է : եւ ասիկայ անանկ մէկ ձայնով

Եւ դէմքով մը ըսաւ որ յայտնի կը ջուցըներ թէ սուրը մեծապէս յարդի է մէկնին Եւ ուրիշ ամէն տեսակ զէնքերը անարդ օխարած Են : Սիծու իշխանը խօսքը շարունակելով ըսաւ . այսու ամենայնիս 'ի հարկէ ձեր մէջը կտրիճ մալդոցմէ թաղկացեալ խումբը զատ քիչ քովութիւն ունեցողներէն թաղկացած , շատ պիտի ըլլայ : Պատասխան տուինք թէ չէ . գաղղիացի զինուոր ըսելն ու քովութիւն ըսելը երկուքը մէկ բան են . եւ խումբ խումբ բաժնուիլը բոլորովին ուրիշ տեսակ պաշտօնի մը հիմնած է : Ինքերուն համար եւ մերմար քաղաքներուն , թեղանօղներուն համար քան համար ուղած տեղեկութիւնները մէկ երկրի մը վրայ յարձակում ընել ուզող թշնամիի մը բընտրած տեղեկութիւններու կը նմանէին :

Օրովային զօրութեան վրայ եղած խօսակցութիւնը մեզնեկանութեան վրայ կէտող իշխանին դաս տալու կընմանէր ճշմարտապէս : Եւ մէնէն վերջը զինուորական գիտութեան վրայ խօսուեցաւ , եւ անկէց ետքը Լաբլան նաւուն հրամանատարին զօրավարութեամբ զինուորական կրթութիւն մը ըլլալով լըմընցաւ : Իհտօ բժշկական ընկերութիւնը կը ներկայացընէին պէշերը , որ անոնց բուրմբն են . եւ ճարտնի մէջ բժիշկ գրեթէ միեակ ասոնք են , ասոնք ալ դասպանին ներկայանալ ուղեցին : Գաղղիացի բժիշկները ներկայացընողն եղաւ Լաբլան նաւուն բժիշկը Պ . Զանսլէն : Խօսքերը զլիաւորապէս փոխարին հիւանդութեան դարմանին վրայ եղան որ այն ատենը մեծ ջարդ կընէր մայրաքաղաքին մէջ : Գաղղիացի

երիտասարդ բժշկին տուած տեղեկութիւններուն վը-
րայ ծեր պծեցը շատ դո՛հ երեւեցաւ, որովհետեւ ծիշտ
եւ կատարեալ էին. եւ վերջը անկէց շնորհակալ ըլ-
լալով ըսաւ, յիշաւի ո՛րքան գեղեցիկ երիտասարդ մըն
ես նէ՛ այնքան ալ վարպետ բժիշկ ես եղեր :

Այլ փութամ մեր իրիկունայցելութիւններուն վը-
րայ խօսելու : Արահը շատ պայծառ չէ՛. բայց պատ-
ռաւոր է քաղաքին ընտիր մարդոցմովը որ իրենց
գիտութիւններուն ամէն ճիւղերուն մէջ վարժուած են :
Պատմութեան եւ քաղաքական տեսչութեան եւ ու-
րիշ բաներու հմուտ մարդիկ կան : Այսպէս անձնա-
կան յատկութիւններն ալ դորձերնին ալ տարբեր են
բայց մեջերնին մեծ համակրութիւն կենալը յայտնի
կըլլայ ուրախ եւ աշխոյժ խօսակցութիւններէն միշտ
երեսնին կը խնդայ. որով մտելիմ եւ ախոյժելի ըն-
կերութիւն մը կը դառնայ : Իրարմէ բաժնուելու ժա-
մանակնին ճշմարիտ տեղեկութեամբ մը կերեւէր երես-
նին. ամէն մէկը խօսք կուտային խնդիր առաջարկել-
նին շարունակելու եւ տեղեկութիւնները չգալրեցը-
նելու յետագայ այցելութեան ժամանակը : Արկու-
գաւառներուն ընակչաց բարբը իրարու հետ բաղդա-
տելը անշուշտ այս խօսակցութիւններնուն ենթա-
կայներուն ամէնէն կարեւորն էր. եւ վերջը չէր
դար. շատերը անխիթ ունեցան կըտրուկ եւ առածի
նման խօսքեր խօսելու ասոր վրայ մեր Ապրիլե-
րին պէս :

Բնկերութեան ամէն կարգերուն վրայ խօսք կըլ-
լար. կայսրէն սկսելով մինչեւ Ահմադ որ հնդկինե-
րուն քարէս ցեղին (եւ մեր կողմերը գտնուող չինկեա-

նէնէրուն) պէս ամենէն ստորին կարգի մարդիկն են :
Մանրամասնաբար պատմելը մէկ զի ձգելու ստիպու-
լուս համար ներքէ ինծի որ հոս միայն Վաղղիայի կայ-
սեր վրայօք մեր խօսակիցներուն մէկ քանի խորհրդա-
ծութիւնները պատմեմ . որովք կայսրուհոյն եւ գաղ-
ղիացի տիկիներուն վրայ ալ ընդարձակուեցան :

Մեր կայսեր իր հպատակներուն բարեխառնութեա-
նը համար ըրած գործերուն եւ ծանապարհորդու-
թիւններուն եւ աշխատանքներուն եւ շարունակ հո-
գերուն եւ մտածութիւններուն վրայ խօսածներնիս
լեկով բոլոր ընկերութիւնը զարմանք եւ մեծ հաւա-
նութիւն յուցուցին եւ կըսէին . ուրեմն կայսր ըլլալ
ըսածնի՞ք ա՛յս է մի , եւ ո՞ր կըմնայ իշխանութեան ա-
ղէկութիւնը եւ հեշտութիւնը : Չեր կարսեր վար-
մունքը որքան աղնիւ ալ է նէ ինքը իր հպատակ-
ներուն ամենէն աւելի խեղճ է : Ես ալ պատասխա-
նեցի . հապա բնաւ բանի տեղ չե՞ս դներ հպատակ-
ներուն անոր վրայ ունեցած անձնանուէր սէրը . մեր
զանիկայ հայր եւ աղատող անուանելը . եւ ապուպայ
մարդոց անոր վրայ զարմանալը : Մեր գրքերուն մե-
կուն մէջը դրուած է թէ ամենէն ստորին մարդու-
մը աղէկութիւն ընելով մարդասէր մարդը հեշտու-
թիւն կըզգայ : Մէկ կայսր մը որ միլեօնաւոր մար-
դիկ երջանիկ կընէ , եւ անանկ բան մը կընէ որ հա-
րիւրաւոր տարիներ կը մնայ , արդեօք որքան մեծ զո-
ուարճութիւն կըզգայ :

Ես գատը վաստըկեցայ . դեմքերը նորէն զո-
ուարթացան , կայսրուհին վրայօք ալ բնութիւն մը
կըսաւ :

Վերկայ գտնուողներուն մէկն ինծի ըսաւ . բարե-
հաճիք ինծի ըսելու . ձեր կայսրուհին յիրաւի աղուոր
սիրա ունի . բայց կրթեալ է : Կըսեն թէ Վաղղիւս
հանձարեղ կնիկ մարդիկ կան : — ԼՅՈ՞ . հանձարեղ .
եւ անանկ հանձարեղ՝ որ թէ որ մերկայսրը աշխա-
քիս իր բարեւը տալու ըլլար նէ , (ձարոցիք մեռ-
նիլը այս կերպով կը բացատրեն) , իր վիհափառ զու-
ւակին պզտիկութեան ատենը կայսրութիւնը մեր ու-
րուն կայսրուհին կը կառավարէր : — Լ՛Յ . նայէ՛ տես
անանկ բան մը որ չենք կրնար հասկնալ . բոլոր գրե-
թէ ամենքը միաբերան : Ուրեմն ձեր մէջ կին ըսելը
ի՞նչ բան կըլլայ կոր : Լ՛խարհքս տալին ի՞ վրան
դարձեր է : — Լ՛ս ալ ցաւելով կըսեմ ըսի . որով-
հետեւ բսելիքս ձեր քաղաքակրթութեան եւ գեղե-
ցիկ յատկութիւններնուդ աղտ մըն է : Կինը ձեր մէջ
բան մը ըսել չէ . Լ՛ս ձեր գիրքերուն մէկին մէջ
գրուած է՝ որ տառ մը մէջ կընիկ մարդը սպասա-
ւորէն քիչ մը վեր է : Ս՛եր մէջ կինը մարդկային
ազգին կարեւորագոյն կէսն է անտեսութեան ամէն
հոգեբուն հաղորդ է . տանը գրեթէ պաշտպան հը-
րեշտակն է : Ընկիւյ տղուն բարբը եւ յատուկ բը-
նաւորութիւնը կը կերպարանէ . անիկայ է որ շատ
անգամ իր խորհուրդներովը իր էրիկը կը հանդար-
տեցընէ միտքը կը լուսաւորէ եւ առաջնորդութիւն
կընէ : Չարմալմամբ մը պատասխան տուին ու իմ
ձեր մէջ կին մարդիկ աղէկ կրթութիւն ալ կառնեն :
— Լ՛նշուշա . եւ անանկ որ չըլլար նէ իր պարտա-
կանութիւնները ի՞նչպէս կըրնար կատարել : Վաղ-
ղիւսի խաթունները իրենց համար իրենց վիճակին

ամեմատ դիտութիւնները ունին . անարհիւտութիւն
նին եւ անձնանորոգութիւնին մինչեւ դիւցազնական
բաժութեան ատիճանը կը հասնի : Այս է ընտանեաց
մէջ անոնց ամենազօր ըլլալուն դաղանիքը որով ըն-
կերութեան մէջ ալ ազդեցութիւն կունենան : —
Իսկ . բայց գիտութիւնը կնիկ մարդոց համար ա-
նօդուտ է . անոնց պէտք եղած հմտութիւնը միայն
կարկարել եւ քիչ մըն ալ կերակուր եփել դիտնալն
է : — Չոր մէջ կարելի է որ այդպէս ըլլայ քանզի
կընիկ մարդոց յատկացուցած պաշտօննիդ իրենց բը-
նական վիճակէն այնքան ստորին է , որ ատոնցմէ ա-
ւելի բան սովորելով իր վիճակին խեղճութիւնը ա-
ւելի աղէկ կը ձանշայ , եւ աւելի մեծ ցաւ կուտայ
իրեն : — Իսկ . բայց վերջապէս , տանը գործերէն
այդքան մեծ բան մը կնիկ մարդու ձեռք յանձնելը
աշխարհքս երկնքին տեղը դնելու եւ յուսինն ա-
րեւուն առջեւէն քալեցընելու եւ ցերեկը զիշերը ք-
նելու պէս բան է : — Աստատիւնն տուի . ձեզնի հա-
մար ըսածըդ շնտախ է . խեղճ կինը յիրաւի գիշեր
մըն է բայց մեր մէջը կինը շատ անգամ իր էրկը-
րէն աւելի պայծառ կը տեսնէ . սիրտը աւելի ուրիշ
չին աշէկութեանը դէնքը նուիրելու պատրաստ է .
նշտախ դաղդիացի տիկին մը շատ պատճառներու հա-
մար մեր անոր վրայ ոնեցած յարգանացը եւ ակնածու-
թեանը եւ խնամոցը արժանի է :

Օարժանքին վերջին ատիճան հասած էր . ա-
մեն ալ գաղղիացի տիկին մը տեսնելու կը փախա-
քէին . եւ ճաթոնցի բարեկամներս այս խօսակցու-
թեամբս կնիկ մարդոց կըթուփեան հաջկաւոր ըլլալ-

նուն : Էհամոզուեցան ալ նէ գաղղիացի խաթուններուն վրայ մեծ համարում ստանալով դացին : Եղօթը ընեմք սիրելի բարեկամ . աղաչեմք Եստուծոյ որ տեառն մերոյ ծանօթութիւնը եւ անոր սրբուհի մօրը պաշտօնը ճաբոնցի կընիկ մարդիկն ալ մեր գաղղիացի մայրերուն եւ քոյրերուն բարձր աստիճանը հասցընէ :
 Վը ցաւիմ որ մէկ դրչի շարժումով մը պիտի դադրեցընեմ խօսակցութիւններնու պատմութիւնը : Բայց թէ որ տենղը ուրիշ կերպ որոշում մը չտայ նէ մօտերըս գալու սուր հանգակը Պեպերուն եւ ուրիշ մարդոց հետ կրօնքի վրայ ըրած խօսակցութիւններնու պատմութիւնը կը բերէ :

Սնաք բարեւի կերակուրը պալատէն եկաւ . եւ միայն միրգեղէններն ու խմորեղէնները մեզին ներկայանալու պատիւը կըրցան ունենալ . բայց ասոնց մէջէն ալ պազութիւնով մը դուրս ձգուածներ եղան : Եմէն մէկը ըզբաղէր լաքէ եւ ձեռնպակէ եւ ուրիշ նիւթերէ արուեստաշէն բաներու հաւաքումը ծամբու պատրաստելու . իսկ իմ գլխաւոր զբաղմունքըս գիրքերս էին : Եւ այսպէս բուսաբանութիւն , աստղաբաշխութիւն , պատմութիւն . գրագիտութիւն , աշխարհացոյց , պատկերներ , ձեռագիրներ , ամէնն ալ սնտուկիս մէջը տեղ ունեցան բարեկամներս որ ասանկ բաներ ժողովելու փափաքս գիտէին , շատ պղէկ ինծի ծառայեցին . եւ անոնց շնորհիւ ճաբոնեւրէն գրքերու հաւաքումըս կատարեալ է :

Սէրմէ , առաքելական բարոյղիչ :
 Դոս — Վոն , 3 մայ . 1859 :

Եյս նամակէս ետքը որ Փարիզու գաղղիական
օրագրի մը մէջ 1859 սեպտ. 6ին տպուած է, (ա-
ռաջին նամակը օգոստ, 31ին եւ երկրորդը սեպտ.
2ին տպուած է), ուրիշ նամակ մը հրատարակուած
է մինչեւ օգոստ մենք ալ այս նամակը իւրեւ վեր-
ջին կը դնենք. ինչ որ ասկէն ետքը նոյն քարոզչին
այս նիւթոյս վրայ գրած ուրիշ նամակը տեսնեմք նե՛-
այն ալ կը թարգմանեմք եւ կը տպեմք:

ԵՇԽԵՐ ՀԵՂՐԵԿԸՆ

Պէնէրիֆֆա. Եփրիկէի դիմացը եւ ծովեզերքէն
բաւական հեռու Ետրանդեան ուկկիանոսի մէջ խուժը
մը կղզիներ կան սպանիացւոց իշխանութեան տակը,
որ քանարեան կղզիներ կըսուին եւ օդոյն պատուա-
կանութեանը համար երանելոց կամ Բարեբաղդ Իշէ-
նէի ալ կըսուին. Եսոնց մէկն է Պէնէրիֆֆա կղզին
որ այն խումբին ամենէն մեծն է, եւ հռչակաւոր ալ
է՝ չէ թէ մեծութիւնովը միայն, այլ եւ իր մէջը
գտնուած լեռնովը որ Բէտիլ Պէնէրիֆֆա կըսուի, եւ
հրաբուղիս է:

Վրաղաբը 80 քիլոմէտր երկայնութիւն եւ 40 քի-
լոմէտր լայնութիւն ունի. մայրաքաղաքը՝ Կըստի Սան-
դա Վրուզ. այսինքն. սուրբ խաչ. եւ 80,000 բը-
նակիչ ունի բոլոր կղզին: Վրաղաբը դաւառին ա-
մենէն միաստակաւոր առուաւորի քաղաքն է աղէկ նա-

առհասարակ մը ունի, որ լաւ պաշտպանուած է երեք մարտիկոցներով որոց շէնքն ու զէնքը շնորհակալ էին ։

Սանդա Վրուդ քաղաքէն Ռիքօ տի Դէնէրիֆֆա լիւր ելլելու երկու ճամբայ կայ ։ Մէկը ուղղակի լիւր կը աւանի ։ Բայց դժուար եւ վտանգաւոր է ։ Երկրորդ ճամբան երկու կողմէն անհարթ ապառաժ է ։ Սիւր Լակունա եւ Որոգալա քաղաքներէն կանցնի ։ Ուստի աւելի երկար կը բլէ, բայց առաջինէն աղէկ եւ զուարճալի է ։

Լակունա քաղաքը Սանդա Վրուդէն ութը քիլոմէտր հեռու է ։ Եւ երկու քաղաքին միջ տեղի գետինը հրաբուխէն վազելով պալած եւ կործացած Լալ ըստած քարերէն կը բաղկանայ ։ Որ առեւը վրան զարնելով սաստիկ կը տաքնայ ։ Լակունայէն անդին շատ մը պարտէզներէ անցնելէն ետքը մինչեւ Որոգալա տանող ճամբան երկու կողմը լեռան կողերուն վրան տնկուած այգիներ են ։ Որոգալա բարձր լեռնազաշտի մը վրայ շինուած է, որկէց ծովը կը տեսնուի ։ Ռիքօ լեռանը ոտքն է ։

Որոգալայէն ելլելով լեռանը ծուռումուռ կիրճերը կը մըտնուի, որ լեռանը գագաթն ելլելու ճամբան է ։ Չարմանային այն է որ մինչեւ լեռանը գագաթը երթուի նէ ճամբուն վրայ շարունակ տեսակ մը խոտ կը բուսնի ։ Որուն տերեւները երկայն և եզերքը քիչ մը առաժնաւոր են ։ Եւ մանուշակի նման ծաղիկ կը բանայ ։ Եւն երկրին ջորիներուն վրան հեծնելով մինչեւ լեռան ստորոտը կերթուի Վամպրէգրա ըստած տեղը դէպ իբրեւ մտեան հիստի ։

Հոն դետինը քանի մի ձեղքեր եւ ծակեր կրակոյին տեսնուիլ. որոնցմե ջրային եւ անհոտ գոլորշիք մը կելէ շարունակ: Լեռանը վերջացած ամենէն բարձր գագաթը որ դէպ արեւմտեան հիւսիս կընայի, ծովու երեսին հաւասարութենէն 3800 մէրո: Բարձր է. արեգակը այն տեղի պէս պայծառ է, եւ երկինքը յստակ ուրիշ տեղացի չերեւիր:

Լեռան գագաթանը մօտ ուրիշ ձեղքեր կան, որ սաստիկ տաք գոլորշիք դուրս կուտան եւ մեղուներու ձայնի նման բզդում մը կը լսուի անհնդատ: Եյս գոլորշիքին բըննուած ջերմաստիւյր 67 էն մինչեւ 75 աստիճան կելէ: Լեռանը այս ձեղքերուն վրա լողափքը խիստ ձերմակ կուահող մըն է, որ հսարունէն դուրս ինկած նիւթերուն փրտտելէն դոյացած է: Որովհետեւ այս նիւթերը միշտ այն շնչահամ ծակերէն դուրս շնչող ծծմբային թթուութիւն ու ջուրին ներգործելովը շատ կը փրտտին: Լեռանը հրաբուխը բոքաբոքեցաւ, եւ շատ նիւթ դուրս հանեց, մէկ մը 1794 ին մայիս ամսոյ մէջ մէկ մըն ալ 1798 ին: Ընկէց ետքը այդպէս բան մը նորէն պատահած չէ:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼԻՔ

Լեռաներուն շէտը: Թէ երկրագործութեան եւ թէ ուրիշ պիտայից համար անասուն դարմանողներուն զխանալու պէտքի բան մը կայ, որուն սովորաբար այնչափ անհոգացած են որ զխանալու բաներուն կարգէն ալ դուրս մնացած է եւ այս է անաբոյններ-

ըր պահելու ակոռներուն շէնքը: Եւ այս դիտողութիւնը միայն մըր այս կողմերուն համար է՝ երօպացիներուն համար ալ է: Եւ տարբերութեամբ որ երօպացիները հետաքրքրութիւն ունին. մէկ բանի մը մէջ պակաս ունենան նէ կը ճանչնան եւ անոր դարման տանելու միջոցները կը բընտրեն: Եւստ ամենայնիւ այս նիւթոյս վրայ դրող զաղղիացի երկրագործ մը կը խոստովանի որ իրենց մէջ ալ տակաւին անասուններուն համար աղէկ ակոռ շինելու կերպը գիտցող քիւ կայ. եւ ինքը հետեւեալ կերպը կը խելադրէ. որ բնագիտական եւ բժշկական բազմազան վրայ հիմնած է:

Եւստը բնագործակ եւ լուսաւոր ըլլալու է. մէջը աղէկ օգ բանելու է. գետինն ամուր եւ հարթ եւ քիչ մըն ալ զառ 'ի վայր (էնիշ) ըլլալու է որ ջուր չկայնի մէջը: Եղմահար մըն ալ ունենալու է մէջը որուն վարի ծայրը ակոռին առաստաղին վրայ ըլլայ. եւ կանաձեւ (քիւլահ պիւնթի) վեր շրջէ մին եւ

Կողմաքուն զ' սնուցի և և քաղ ան հմուց քա

Եւստը քաղմահար քաղմար Թանձը կտաւէ մեծ խողովակի ձեւով շինուած բան մըն է: Երբն վերի ծայրը լայն կըլայ, եւ հովը որ կողմէն փչէ նէ բերանը այն կողմը կը դարձուի. լայն բերանէն վարը նեղ կըլլայ եւ կը հասնի մինչեւ օղը: Երբողեւը տեղը գետնէն բաւական բարձր: Երբացողները ասիկայ կը շինեն. եւ ամառ ատեն չողենաւերու մէջ ալ բորձ կածեն. մէքենայն բանեցընողներուն կէտեցած տեղը հով տալու համար որ տարբերակէն չնկղին:

աանը ծածքէն քանի մի ոտնաչափ բարձր։ Այս կերպով ակոռները շինելը ամենահարկաւոր է. եւ այս ջըլալով անասուններու տարափոխիկ հիւանդութիւններ կը գոյանան. որ շատ անասուններ կը սաակեցընեն, եւ երկրագործներուն շատ վնասներ կը հասցունեն։ Ասանկ հիւանդութիւններ շատ անգամ ցած եւ օդ չառնող ակոռները կը լլան։

Այս կերպը որուն հարկաւոր եւ օգտակար ըլլալը ամէն մարդու խելք կը վկայէ, կը ցուցընէ որ ակոռներուն տեղերը գրեթէ ամէնուն ալ փոխելու է. վասն զի քիչ մարդ կայ որ ակոռ շինելու համար օգը աղէկ եւ լուսաւոր եւ հով բանելու տեղ նայի. ամէն ալ ակոռը անանկ տեղ շինելու կընային որ ուրիշ բանի չծառայէ։ Իւ այս ալ թիւր մը տաժութիւն մըն է. կուզեն խեղճ անասունները ամէն բանի ծառայեցընել. եւ ուրիշ բանի չեկած տեղերը անոնց կը սահմանեն որով անոնք ալ օրէ օր կը դէժան, կը նիհարանան, կը տկարանան, իրենք ալ բանի չեն դար. եւ վերջապէս հիւանդանալով իրենց հիւանդութիւնը ուրիշ անասուններու ալ հաղորդելէն ետքը կը սատկին, կաշինն իրենց տիրոջը մխիթարութիւն կը ձգեն։

Մեծահասակներն։ Օրվային ճանապարհորդութիւնները գիտութեանց մեծ օգուտ ընելը ամբրիկայիները գիտնալով այս սեռակ ճանապարհորդութիւններն ընելու, կամ ընողներուն քաջալերութիւն եւ օգնութիւն առնալ կը փութան։ Բէն անուն ճանապարհորդին իբրեւ վերաբոյժ ընկերացող Պ. Լէյս

վարպետը առաջիկայ գարնան մէջ նոր ճանապարհորդութիւն մը պիտի ընէ . եւ ծախքը պիտի հոգայ միացեալ նահանգաց ուսումնական ընկերութիւնը : Հառ բաներ կան հասկցուելիք . շատ կարեւոր խնդիրներ կան լուծուելիք աշխարհագրութեան ուսումնական մասին եւ ատղաքաշխութեան վրայօք այս ճանապարհորդութենէս անոնց համար որոշ տեղեկութիւն անել կը յուսացուի ուստի Լէրոպայի ուսումնական ընկերութիւններն ալ այս ծախքին հանգանակելու առաջարկութիւն ըրին ալ նէ Լ. մերիկայի ընկերութիւնը այս բնօր միայն իրենք կրնլ իրենց պատիւ սեպելով դուրսէն ընկեր շուղեցին :

Հիշեցնենք : Սուրբապետ մը , անցնողներուն գութն աւելի շարժելու համար մտածեց որ համը ձեւանայ : Երիտասարդ մարդ մը , որ խաբէրան կը ճանչնար իր քսակը հանելով անտարբերութեամբ մը անոր հարցուց . համը լըլալէդ 'ի վեր շատ ասուն կայ , համըը պատասխանեց , տղայութենէ 'ի վեր :

Սուրբապետ : Արեւմտեան Գաղղիայի հնագիտաց ընկերութեան մէկ նստին մէջ Պ . Ռէտէ իմաստունը լատին լեզուով 1420ին գրուած յիշատակագիր մը կարդացեր է . որկէց կրօնայ իմացուիլ որ այն ժամանակները որ տպարութեան արուեստը Լէրոպայի մէջ գործածութեան սկսելէն քանի մի տարի առաջ է , գիտութիւնը խաւարած չէր . պիտանի գիրքեր կը գրուէին : Թէպէտ քիչ էին . եւ գիտութիւններուն պահպանները եւ ծաղկեցնողները եկեղեցականն :

“Այն օրը վախճանեցաւ ի Յիսուս Քրիստոս
 “պատուական հայրերնին Տ. Ս. Ս. ման ալ Քրիստոս
 “Բօագիէի եպիսկոպոսը, եւ Հռոմայ սուրբ եկե-
 “ղեցւոյն կարդինալը, եւ այս վանքիս բարերարը
 “եւ հայրը որ մեզի ըրած ուրիշ առատ բարութիւն-
 “ներէն զատ երկու հատոր խիստ մեծագին գիրք մը
 “ընծայ ըրաւ, որ քառասուն կըսուի, եւ մեր գրատան
 “մէջ չըլծայով կապուած է որուն համար վանքը
 “պարտաւորուած է այսօր անոր տօնի դարձն ը-
 “նելու” :

Եյս տեղեկութիւնէս կերէի նախ միաբաններուն
 ուսումնասիրութիւնը եւ երախտագիտութիւնը : Արկ-
 բորդ գիրքերուն այն ատենը քիչ գտնուիլը : Արքայ-
 ինաւով անկորուած պահելին, որ գիրքը հրատու-
 նէն չհեռանալու համար չըլծայով կապեր են : Զոր-
 բորդ երախտագիտին կենդանութեան ատենն ալ տ-
 նոր հագուստ փրկութեանը համար եկեղեցւոյ մէջ
 հանդիսիս աղօթք ընելու սովորութիւնը : Եր հիմայ
 մինակ ննջեցելոց համար կըլլայ : Հինգերորդ սրբոց
 վարքը եկեղեցւոյ մէջ կարգացուելու սովորութիւնը
 որ մինչեւ հիմայ հայաստանեայց եկեղեցւոյ մէջ կը
 կարգացուի :

Երեսնան ջրհոր : Աերկայ դարուս երեւելի գիւ-
 տերուն մէկն ալ այս տեսակ ջրհոր բանալն է : Ո-
 րով բնաւ ջուր չկեցած տեղերն ալ որ հասարակ
 կերպով հոր բաշտոյնները յոյսերնին կընրած են, այս
 կերպով կընծայ առատ ջուր ելլել : Եւ ասոր բոլոր
 վարպետութիւնն է բացուած հորին քովերնն եկած

ըննէին, եւ քրիստոնէութիւնը զիտութեանց նպաստաւոր չէ ըսող Լերոպացի անհաւատներուն խօսքը սուտ հանող բաղմամբիւ ապացոյցներուն մէջն ալ այս կրօնայ ըլլալ:

Ուշեայ Թուին դադղիացի Բուաղիէ քաղաքին եպիսկոպոսն էր Սիմոն սը Քրամօ, որ այն ատենուան նայելով մեծադին ընծայ մըն էր տուէր նոյն քաղաքին ժաքօպէն ըսուած կարգի կրօնաւորներուն վանքին, եւ ասոնք իրենց արձանագրութեանց մըջ անցուցեր էին առոր քարերար առատաձեռնութիւնը:

Պ. Ռէտէին գտած եւ հնագիտաց ընկերութեան ժողովքին մէջ կարգացած յիշատակաւորն ալ այս էր:

“Տակաւին մօտերն կամեցաւ իրեն մեղի ըրած
 “բարերարութիւնները լրացնել, մեզի պատուական
 “եւ փափաքել եւ օգտակար եւ արդիւնաւոր եւ
 “անդին ողորմութիւն մը տալով. որ է երկու մեծ
 “հատորէ բաղկացեալ գիրք մը որուն անունն է բա-
 “~~բարութեան~~ եւ ~~առիւծ~~ էր մարտը եւ աղատ կամքով
 “մեզի տուաւ մեր գրանցին զարդ եւ մեր վանքին
 “կրօնաւորներուն շահ եւ օգուտ ըլլալու համար”:

Եսս կրօնաւորները երախտադէտ ոգիէ շարժելով իրենց մէջ ժողովք ընելով խորհուրդ ըրին որ Սիմոն սը Քրամօ եպիսկոպոսը վանքին մըջ եղած ամէն աղօթքներուն եւ բարի գործերուն վարձույր հաշորդ ընեն. եւ ամէն տարի անխափան անոր հոգւոյն համար պաշտօն կատարեն. եւ վախճանելէն ետքը եկեղեցւոյ մէջ կարդացուած յայտարարին մէջ վախճանած օրը յիշատակուած սուրբերուն պատմութեան վերջօ անոր ալ յիշատակը գրին այսպէս:

չուրը չընդունիլ, փորել կամ աւելի ճիշդ խօսե-
լով, գետինը ծակել, մինչև որ ուղղակի գետնին
տակէն ջուր բղխէ: Բայնկ ջրհոր մը բացուած կայ
փարիզու կրնէլ ըսուած արուարձանը, որուն ա-
ռաւ ջուրը քաղաքին մեծ սգուտ կընէ, սպանկանո-
ցին (սալիսանէին) անբաւ ազտեղութիւնները մաք-
րելով:

Եյս անժխտելի աղէկութենէն զատ այս տեսակ
ջրհորներուն բացուիլը դիտուններուն առաջը ուրիշ
յարդ ալ ունի: Զրաբաշխութեան եւ երկրաբանու-
թեան գիտութիւններուն մեծապէս նպաստաւոր են:
Եւ ասոր օրինակ մըն է Ենգղիայի Լքօս գաւառին
Լպլըտին քաղաքը բացուած արտէսեան ջրհորը, ո-
րուն վրայ իմաստունները երկու անսովոր բան դի-
տեցին. նախ. որ թէպէտ կարծր հաւաքար (կրանիդ)
ծակելով անոր մէջէն ելած է. բայց ուժգնութեամբ
վեր կը ցաթկէ եւ հորին բերնէն դուրս կելլէ շա-
տուանի պէս. որ հասարակօրէն քարէ բղխած ջու-
րերը այնքան տուտ չեն ըլլար որ այսպէս ուժ մը
ունենան: Երկրորդ տաքութեան աստիճաններու
որոշում մը. որով ուրիշ տեղեր տեսնուածէն աղէկ
կըրցան դիտել իմաստունները որ գետնին տակը քա-
նի խորունկ իջնուի ուէ տաքութիւնը այնքան կաւել-
նայ. եւ քիչ միջոցներով այս աւելնալուն տարբե-
րութիւնը երեւելի կըլլայ:

Եյս տեղս ջերմաչափով դիտողութիւններ ըրին
որքան խորութեան մէջ քանի աստիճան տաքութիւն
գտնուելուն տասն տարի շարունակեցին այս դիտողու-
ղութիւնները եւ փարիզու Պ. Լքուէս երեւելի բը-

նագէտին իմացուցին . որ հաշուելով ջերմութեան
միջին ստիճանը 80, 8' գտաւ : Եւս հիմանս վրայ
իմացուեցաւ որ Լպըրտինի ջրհորին մէջ քանի . վար
ինջնութիւնէ տաքութիւնը ամէն 1 $\frac{1}{4}$ մէղրօին աւաիճան
մը կաւելնայ : Եւսիկայ անհաւատաւի կերեւի կըսէ
մնացէտ մը բայց հաշիւները հաւատաւի ըրին .
Լըրկրաբաններուն մէջ երկար ժամանակէ 'ի վերկար-
ծիք կայ թէ աշխարհիս կեղրոնը կրակ է . եւ թէ
հրաբուխները այս կրակին ճամբայ պանելով գուրս
պողութկացած տեղերն են . այս կարծիքը երկրաբան-
ներուն մէջ ամէնուն ընդունելի չէ այնչէ Լպըրտին
եղած փորձերուն պէս անկէց ետքը եղած փորձերը
եւ հաշիւները մեծապէս հաւանական կընեն :

Գիտնէօրոսի ականջ	252
Երազ մը	267
Երազ տեսնելը	64
Երկայնակեցութիւն	124
Լեզուաւորեալ դարուն մէջ արդիւնքը	346
Լսարեքայ թղթաւոր	283
Խոստովանութիւն	20
Խորհրդատեարի թարգմանութիւնները	104, 314
Մոսկովի	164
Պաղտիկի իմաստասէր	28
Պոլիագնացութիւն	276
Սաճողիկ	139, 171, 202, 235
Սարապետ կաթողիկոս ուղնեցի	294, 326, 358
Սենդանաւանութիւն	224
Սուրուսեան դէմ դեզ	153
Ստակ մը	347
Ստաղովեան ախտին դէմ օրէնք մը	351
Սոյր մը առողջ մարդու առաջնորդ	351
Ստակ մը	83
Նաղորդութեան վրայ լուսերին մէջ խօսքը	241
Նամը մուրացկան	377
Նալոց ոստիկանութեան վրայ	15, 40, 73
Նանգանակ Տաւադոյ	80
Նաւատը եւ սուրը գիւրք	237
Նաւիկի վաճառականութիւն	223
Նուրի-Ֆիլտի մարմինը	244
Նրեշտակներու գերեզման	135
Ն'աբոնցիներ	265, 302, 333, 366